«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 մայիսի։ Պաշտօնապէս հաղորդում են, որ զինուորական մինիստր Վաննովսկի իր ճառի մէջ ստորադրեալներին յայտնեց, որ թագաւորը նրան անպայման պարտաւորեցրել է առանց յետաձգելու ամէն միջոցներ ձեռք առնել զինուորական ծախսերը պակասեցնելու համար։ „Голосъ“ լրագիրը լսել է, որ մայիսի 25-ին գիշերը նաւատորմում ծառայող մի քանի անձինք են կալանաւորված։

ՍՕՖԻԱ, 25 մայիսի։ Ռուսի Զայն վերնագրով բոլգարներին ուղղված մէկ ազգաբարութիւն տարածվեցաւ, որի մէջ Ռուսաստանի կողմից խորհուրդ է տրվում նրանց կատարել իշխան Ալէքսանդրի ցանկութիւնները։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 մայիսի։ Պաշտօնապէս հաղորդված է, որ պետական խորհրդական Դիմիտրիէվին հրամայված է լինել պետերբուրգեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու։

ԽԱՐԿՈՎ, 25 մայիսի։ Նահանգական զէմստվոյի վարչութեան նախագահը մինիստր Իգնատիէվից հրաւիրված է Ս. Պետերբուրգ, մասնակցելու այն խորհրդակցութիւններին, որոնք պէտք է լինեն գիւղական հողերը յետ գնելու ժամանակը պակասեցնելու համար։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 մայիսի։ Պետական բանկի 5% առմնակը առաջին շրջանի արժէ 96 ր. 62 կ., երկրորդ 94 ր. 50 կ., երրորդ 94 ր. 37 կ., չորրորդ 94 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան առմնակը արժէ 225 ր. 25 կ., երկրորդ 218 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան առմնակը արժէ 93 ր. 37 կ., երկրորդ 93 ր. 25 կ., երրորդ 93 ր. 25 կ., ոսկի 8 ր. 7 կ։ Ռուսաց 1 բուբլ Լօնդօնի վրա արժէ 24,50 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 209 մարկ 50 պֆ., Փարիզի վրա արժէ 258 ֆրանկ։ Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

144 Արժրունու գալէրէա 144
ամենաէժան պահեստ
մեբէլի և հայելիների։

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում Մի-ՔԱՑԷԼ, ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

7—150

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գրիգոր Տէր-Մելքիսեդեկեան, խմբագիր „Աշխատանք“ լրագրի, պատրաստում է Թիֆլիսի լեալական և կասիք ուսումնարանների համար ուսանողներ, տալիս է առանձնապէս դասեր մաթեմատիքայի, երկակի իտալական հաշուեգիտութեան, անատոմիայի, ֆրանսիարէն, ռուս և հայ լեզուների և այլն։ Պատրաստ է նոյնպէս տեսչական կամ ուսուցչական պաշտօնով գնալ հայ գաւառ։ Պայմանները ուսումնարանական վարչութիւնք և մասնաւոր անձինք բարեհաճեն ուղղել այս հասցէով. Тифлисъ, въ табачный магазинъ Теръ-Осипова подъ гостинницею *Кавказъ*, или же: въ типографію Моссеса Вартаніанъ, редактору газеты *Трудъ*.

1—3

Ժողովել եմ, ժողովում եմ և շուտով 'ի լոյս պէտք է ածեմ հայկական ձայնագրութեամբ „Ծաղկաքաղ ձայնագրեալ երգարան.“ ուստի խնդրում եմ ձայնագրագէտներին և այն պարոններին, որոց մօտ գըտանվում են ազգային երգեր թէ հայկական և թէ եւրոպական ձայնագրութեամբ (նոտաներով) բարեհաճել մինչև յառաջիկայ օգոստոս ամիսը ուղարկել ինձ։ Երգեր ուղարկողների ազգանունները կը տպագրուին երգարանի վերջը և մի-մի օրինակ էլ ձրիապէս կը ստանան։ Վարձատրութիւն պահանջողները ևս կարող են իրանց պայմանները յայտնել։ Իմ հասցէն։ Տֆխիս, Եղնիկ քահանայի Երզնկեանց։ 2—10

ՋԱ ՄԱՆԱԼԻ ԷԺԱՆ ԳՆՈՎ
ծախվում է արտասահմանի շօտլանդիական **ՑԵՄԵՆՏ** փօթիի մէջ էլիսբար **ԲԱԲԱԼՕՎԻ** մօտ, Քութայիսի մէջ **ԿՈՒՐՑՕՎԻ** մօտ։ Նոյնպէս ծախվում են չափաւոր գներով **ԲՆԱԿԱՆ ՄԵՂՐԱՄՈՄԵՐ** սեփական գործարանից, **ԹԻՖԼԻՍՈՒՄ** Սիօնսկայա փողոցի վրա, **ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ** և **ԳՕՐԻՈՒՄ**։
ԻՎԱՆ ԿՈՒՐՑՕՎ
4—11 (2)

Թիֆլիսի Հայոց ծխական ուսումնարանների ներկայ 1881 թ. տարեկան հարցաքննութիւնները

Մայիսի 22 և 23-ին	Կաթողիկէ Ս. Գէորգ եկ. ուսումն.	
„ 25-ից—30-ը	Հաւլաբարի Մարիամեան օր. ուսումն.	
„ 28 և 29-ին	Կուկիու Թանդոյեան օր. ուսումն.	
„ 30-ին „	Հաւլաբարի Ս. Մինաս եկ. ուսումն.	
Յունիսի 1 և 2-ին	Կուկիու Ս. Աստուածածին եկ. ուսումն.	
„ 3 և 4-ին	Ջղրաշէն եկ. ուսումնարաններում.	
„ 5-ին „	Շամքոռեցոց եկ. ուսումնարանում.	
„ 6-ին „	Զորաբաշի Ս. Գէորգ եկ. ուսումնարանում.	
„ 8-ին „	Ս. Կարապետ եկ. ուսումնարանում.	
„ 9-ին „	Զուղուբէթի Ս. Աստուած. եկ. ուսումնարաններում.	

Թեմական վիրատեսուչ Բարխուդարեանց

Ձը նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջվայ գներով կը ծախվեն։ **ԿՕՆԳՕ-ԹԷՅ** 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիանալի **ԿԱՑՍԱՈՒ** 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱՒ ԹԷՅ** 2 ր. առանց թղթի։ Անգլիական բէվոլվերներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200ր. Անգլիական խանութի մէջ։ Գործակալութիւն **ԲԱՐՆՍԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ**, ջօնսօնի **ԿՈՂՊԷՔՆԵՐԸ**, Տուրնօրի **ԳՐԻՉՆԵՐԸ** և էկստրակտ կակաշօկօլադի ծախելու համար, որոնք Վարիգի հանդիսի ժամանակ ոսկէ մեդալ ստացան։ **ՀՈՏԱԻԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ** 1 ր. 65 կ. և ամենալաւը 2 ր. 30 կ։ Վաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ։ Ամբողջ հագուստ 15 ր., կօնֆեկտներ հագի դէմ 60 կ. ֆունտը։ 80—100

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին **ՐԱՖՖԻԻ „ԽԵՆԹԸ“** անունով վիպասանութիւնը։ Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք դիմել ՇՈՒՇԻ, կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահսէսի-Յակոբեանցի տպարանը։ ԲԱԳՈՒ՝ պ. Ալէքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷԶ՝ պ. Գրիգոր Բէջանեանցին.
Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арунянца АБѢЛУ АПРѢСЯНЦУ.

Թիֆլիսում կազմվում է «Մարմնամարզական ընկերութիւն» (Гимнастическое общество), որի նպատակ է տալ իր անդամներին միջոց վարժվելու մարմնամարզութեան սրախաղութեան (фехтованье) և հրացան արձակելու մէջ, քաղաքից դուրս զբօսանքներ և ուրիշ թոյլ տված զուարճութիւններ անել, որոնք զարգացնում են ֆիզիկական կարողութիւնը։

Ընկերութեան կանոնադրութիւնը տէրութիւնից արդէն հաստատված է և տպված է № 90 «Кавказъ» լրագրի մէջ, ապրիլի 25-ին։

«Մարմնամարզական ընկերութեան» անդամ գրվել և տարեկան 10 բուբլի վճարել կարելի է։

1) Փոխարքայի գլխաւոր կառավարութեան դեպարտամենտում, կարգ կարգովիչ Կիսաերի մօտ, ամենայն օր 11 ժամից մինչև ժամի 3 ցերեկվայ։

2) Վիկտոր Ալէքսանդրովիչ Դինգելշտեդտի մօտ 6-ից մինչև 8-ը երեկոյեան, Թամամշեվի տանը, Սոլդատսկի բազարի վրա։

3) «Кавказъ» լրագրի խմբագրութեան մէջ։

4) Ալէքսանդր Ալէքսանդրովիչ Բրունսի մօտ, Միխայելովսկայա փողոցի վրա, ռուսական մագազինում։

„ԽԵՆԹԸ“
ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՖՖԻԻ

Տպված մաքուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 երեսից։ Թիֆլիսում ծախվում է „Մշակի“ խմբագրատունը, „կենտրօնական գրավաճառանոցում“, „Կովկասեան գրավաճառանոցում“ պ. Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզարջեանցի, Հովուեանցի ծխախոտի մագազիններում։

Գինն է **1 բուբլ 20** կոպ.։

„ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՕՎ և ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՍԵՆԱԿԻ մէջ, Երևանակայա հրապարակի վրա, ջակելու տանը բացված է առևտրագրութիւն յօգուտ 'ի Տէր Հանգուցեալ Կայսր Ալէքսանդր II-ի **ՈՐԲԱՆՈՑԻ**, որ բացվելու է Թիֆլիսի մէջ։

8—15

Արդէն վաճառվում է
ԻՆՉ ԲԱՆ Է
ԺԱՆՏԱԽՏԸ
Ինչ բանով կարելի է փրկուել նոր անից և այլ տարաբնոյթ տկարութիւններից։ Ժողովրդական և հասարակաց մատչելի խրատ բժիշկ Պ. Ա. Իլինսկոյ։

Թարգմանութիւն Ա. Ս. Գուլամիրեանց

Գինն է 15 կոպ. 100-ներով գնողներին զիջումն կը լինի։ Մեր հասցէն՝ Въ Эривань
А. Гуламирянцу

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մեբաթաներ, կօնֆեկտներ, **ԿԱԿԱՕ**, բրինձ, ԱՄԱՆԵՂԷՆ, բօկալներ, թասեր, երես լուանալու ամաններ, չայնիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судки), մատուցարաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գդալներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիաներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, պրօմներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, տրիկօ, պարուսին, թաշկինակներ, երեսսրբիչներ, կլեօնկա, դուլբաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՕՐՏ-ՎԷՅՆ, խերես, կօնեակ և այլն։ Թէց մեծ քանակութեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԴԸ 44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54 ր., և այլն։ Այդ բոլորը կարելի է գտնել **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**։
Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԵՐԲԵՏ մանգնպիա, խմոր ԾԱՐԱՒԻ դէմ, ԹԻՆԱՑԻ գինի ջերմի դէմ, կարբոլեան ՓՕՇԻ, հեղուկ և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ վատերկոզների համար, պարսկական փոշի։ 3—100

Ներսիսեան դպրոցի մի ուսուցիչ, ամենաչափաւոր գներով և ձեռնտու պայմաններով, պատրաստում է աշակերտներին նոյն դպրոցի բոլոր պատրաստականների, և I, II և III-դ դասատանց համար։

Նոյնպէս պատրաստում է հայ-օրիորդներին Ս. Գայանեան և Յովհաննեան օրիորդաց դպրոցների բոլոր դասատանց համար։

Ցանկացողները, թո՛ղ մինչև յունիսի 15-ը յայտնեն իրենց պահանջները Ներսիսեան դպրոցի տեսուչ պ. Արշակ Նահապետեանին։

3—3

Дозволено цензурою, Тифлисъ. 27 Мая 1881 года.
Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.